ՎԱՐԴՈՒՀԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍՈՒՄ

Վերջին տարիներին կրթական համակարգում ու նաև մեր ամենօրյա կյանքում, նրա բոլոր ոլորտներում տեղի ունեցող մշտական փոփոխությունները ստիպում են զնալ նոր փոփոխությունների նաև այն մեթոդների ընտրության հարցում, որոնք մենք կիրառում ենք դասավանում ու ուսուցման գործընթացում: Այդպիսի միջոցներից է նաև դասապրոցեսի ժամանակ ուսումնական գործընթացի կազմակերպումը տեխնիկական առաջընթացի արդյունքում ձեռք բերված նոր միջոցների կիրառմամբ: Նման միջոցներից կարևորագույնը համարվում է էլեկտրոնային նյութերի ներմուծումը ուսումնական գործընթացի մեջ ու դրանց օգնությամբ ուսուցման նոր միջոցների մշակումը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում էլեկտրոնային նյութը, ինչպե՞ս կարելի է այն օգտագործել ուսուցման գործընթացի կազմակերպումը հեշտացնելու համար, և ի՞նչ առավելություններ ու թերություններ ունի նման նյութի կիրառումը մեր այսօրվա դպրոցական (կրթական) համակարգում:

Էլեկտրոնային նյութեր ասելով՝ այսօր մեզանից շատերը պատկերացնում են միայն այն նյութերը, որոնք կարելի է ձեռք բերել համացանցային տարբեր կայքերի օգնությամբ: Սակայն բոլորս էլ գիտենք, որ երբ երեխային հանձնարարում ենք որևէ տեղեկատվական նորության ծանոթանալ՝ համացանցից օգտվելով, մենք նրան մղում ենք դեպի մի աշխարհ, որտեղ տեղ են գտել բազմաթիվ ու բազմաբնույթ տեղեկատվական էջեր, և դրանցից շատերը չեն համապատասխանում այն սկզբունքներին, որոնցով մենք դաստիարակում ենք մեր երեխաներին: Վախենալով վերջիններիս մեծ խառնաշփոթի մեջ զցելուց՝ մենք փորձում ենք նրանց հեռու պահել դրանից: Սակայն միևնույն ժամանակ մեր ամենօրյա կյանքում տեղի ունեցող փոփոխություններն հաստատում են այն, որ երեխաներին այլևս չեն հետաքրքրում տպագիր գրքերն ու անգույն նկարները: Նրանք արդեն տեղյակ են այն աշխարհի մասին, որը սկսել է հասանելի դառնալ Հայաստանի բոլոր անկյուններում, ու որի անունը Համացանց է: Իսկ ի՞նչ է կարելի անել, որ երեխաները կարողանան և՛ սովորել, և՛ միևնույն ժամանակ հետ չմնալ ժամանակակից տեխնոլոգիական ձեռքբերումների հետ շփվելուց: Սրա միակ պատասխանը մեզ անհրաժեշտ ուսումնական

նյութի ներկայացումն է էլեկտրոնային նյութերի պատրաստման միջոցով: Այս դեպքում մենք ինքներս կարող ենք ընտրել այն նյութը, որն անհրաժեշտ է համարվում տվյալ առարկայի ուսուցանման համար: Միևնույն ժամանակ մենք ապահովում ենք այն հետաքրքրության առկայությունը, որի պակասի հետևանքով շատ երեխաներ խուսափում են դասապրոցեսին մասնակցելուց:

Ժամանակակից տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ցանկացած նյութ ներկայացնել անիմացիոն տեսքով, որը բնականաբար կարող է հրապուրել ցանկացած երեխայի:

Ստեղծելով նմանատիպ էլեկտրոնային ուսումնական ձեռնարկ ու այն փորձարկելով դասապրոցեսի ընթացքում մենք համոզվեցինք, որը նման նյութի կիրառումը տալիս է բազմաթիվ առավելություններ: Նախ՝ պետք է նշել այն, որ նման նյութերի մեջ հնարավոր է ներկայացնել բազմաթիվ ձայնային և տեսաֆայլեր, որոնք մեծապես նպաստում են երեխաների լսողական ու ըմբռնողական հմտությունների զարգացմանը: Ինչպես գիտենք, օտար լեզուների ուսուցանման գործընթացի հիմնական բարդություններից մեկն այն է, որ անհրաժեշտ է երեխաների համար հասկանալի դարձնել տարբեր խոսքային կառույցներ, դրանց կիրառումը տարբեր իրավիճակներում: Բացի այդ՝ մեծ խնդիր է նաև այն, որ հաճախ երեխաները հասկանում են իրենց ուսուցչի արտասանությունը, բայց չեն ընկալում խոսողի կամ անգամ մեկ այլ ուսուցչի խոսքը:

Էլեկտրոնային նյութերի օգտագործումը ուսուցման գործընթացում թույլ է տալիս աշակերտներին ծանոթանալ տարբեր մարդկանց կողմից խոսքային տարբեր կառույցների կիրառմանը, հասկանալ տարբեր խոսողների արտասանական առանձնահատկությունները: Մա հիարկե դառնում է լավագույն միջոց խոսելու հմտության մշակման գործում:

Իսկ ինչպես գիտենք *«Երկրորդ օտար լեզու սովորելը պետք է ավելի շատ նման լինի առաջին լեզուն սովորելուն – շատ բանավոր հաղորդակցություն, լեզվի ինքնաբուխ օգտագործում, առանց առաջին լեզվից երկրորդ լեզու կատարվող թարգմանության, և շատ քիչ կամ առանց քերականական կանոնների վերլուծման»(1)*:

Էլեկտրոնային նյութը նման հնարավորություն է ընձեռնում սովորողին ու նպաստում է նրա կողմից լեզվական կառույցների ընկալմանը:

Հաջորդ կարևոր հանգամանքը, որ անհրաժեշտ է նշել որպես էլեկտրոնային ուսուցման դրական կողմ, այն է, որ այս նյութի կիրառմամբ երեխան դառնում է ավելի ինքնուրույն, կարողանում է կենտրոնանալ իր սեփական աշխատանքի վրա՝ կախում չունենալով դասարանի մյուս աշակերտներից: Ուսուցիչն էլ ավելի շատ ժամանակ է ունենում բոլոր

աշակերտներին անհատական մոտեցում ցուցաբերելու համար, կարողանում է մշակել հատուկ ծրագիր յուրաքանչյուր աշակերտի հետ աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Բացի այդ՝ նման նյութերն օգնում են նաև նրանց, ովքեր, այս կամ այն պատճառով բացակայելով դասից, չեն կարողանում հասկանալ նոր բացատրված նյութը: Ձեռքի տակ ունենալով էլեկտրոնային նյութը՝ նրանք կարող են լրացնել իրենց բացը ու հետ չմնալ ընդհանուր աշխատանքային գրաֆիկից:

Նման նյութերը լուծում են նաև այն երեխաների համար, ովքեր, ունենալով հաշմանդամություն, չեն կարող գնալ դպրոց ու ստանալ կրթություն: Անհատական ուսուցման մի միջոց դառնալով՝ այս նյութերը կարող են ապահովել բոլորի համար նախատեսված համընդհանուր կրթության կազմակերպումը:

Թվարկելով բազմաթիվ դրական կողմեր՝ չի կարելի անտեսել այն թերությունները, որ այս նյութերի կիրառումը կարող է առաջացնել: Ամենամեծ խնդիրը, որ կարող է առաջանալ, ուսուցչի դերի նվազումն է դասապրոցեսի ընթացքում: Եթե օգտագործվող էլեկտրոնային նյութը կարող է տալ գիտելիքներ, այն չի կարող փոխարինել այն պարզ մարդկային փոխհարաբերություններին, որոնց կարիքն ունի ցանկացած հասարակական էակ: Դրա համար ուսուցիչը պետք է հիշի, որ կիրառելով այս նյութերը՝ նա չի ազատվում իր դերից ու պարտականություններից: Նա պետք է մնա կարևոր կենտրոն, որ աշակերտին միացնում է ուսուցման գործընթացին, նա պետք է հսկի, ուղղություն տա աշակերտներին, կազմակերպի դասապրոցեսի ճիշտ ու արդյունավետ ընթացքը, այլապես անգամ էլեկտրոնային նյութերի հետաքրքիր լինելը չի կարող հասնել իր գլխավոր նպատակին՝ նյութի լավ ընկալումն ապահովելուն: Ուսուցչի դերը եղել ու մնում է շատ կարևոր: Ինչպես ասում են.

«Համարեք ձեզ ոչ այնքան մի ուսուցիչ ով պետք է մշտապես տեղեկություն "հասցնել" ուսանողներին, այլ ավելի շատ որպես ուսուցման միջնորդ ում գործն է ուսուցման համար բեմահարթակ պատրաստելը, ձեր ուսանողների գլուխներում անիվը գործի դնելը, նրանց դեպի իրենց սեփական ունակությունները ուղղորդելը և այդ ունակությունները արդյունավետ ուղղու վրա դնելը (2):

Եթե այսօր դասարան ենք բերում նման նյութեր, մենք պետք է պատրաստ լինենք բոլոր այն դժվարություններին, որոնց կարող ենք հանդիպել: Դրանցից է նաև այն հանգամանքը, որ ուսուցման հին մեթոդների կիրառմանը սովոր մեր վաստակաշատ ուսուցիչներից շատերը չեն ընդունում այս նորամուծությունները և վստահ լինելով, որ սրանք

անարդյունավետ միջոցներ են, անգամ չեն փորձում դրանք կիրառել: Կամ նաև բազմաթիվ դեպքեր, երբ ուսուցիչների համակարգչային գիտելիքներն ու հմտությունները նրանց հնարավորություն չեն տալիս այս նյութերի կիրառման համար: Նման խնդիրները իհարկե շատ են, և չեն կարող իրենց բացասական ազդեցությունը չունենալ այս նոր քայլերի ներմուծման գործընթացի վրա, բայց ամեն դեպքում էլեկտրոնային նյութերի կիրառումն իսկապես տալիս է դրական արդյունք և հետաքրքրություն է առաջացնում սովորողների մոտ այն պրոցեսի նկատմամբ, որն անվանում ենք ուսումնառության գործընթաց:

Դեռ վաղուց է հաստատվել, որ մոտիվացիայի առկայությունը նպաստում է դրական արդյունքների ստացմանը, իսկ էլեկտրոնային նյութերը առաջացնում են այս ներքին մղումը, քանի որ սովորողը ստանում է որոշակի ազատություն իր ընտրության մեջ, իսկ դա ոգևորում է նրան: *Որոշ մտածողական հոգեբաններ կարևորություն են տալիս մարդկանց ինքնուրույն որոշելուն թե ինչ մտածեն, զգան կամ անեն: Մենք առանձնանում ենք մեր սեփական որոշումները կայացնելով, և ոչ թե ուրիշների արածին պարզապես արձագանքելով: Մոտիվացիան ամենաբարձր մակարդակի է լինում, երբ մարդ կարողանում է ինքնուրույն ընտրություն կայացնել՝ անկախ նրանից թե այդ որոշման իրականացումը լինելու է կարճ, թե երկար ժամանակահատվածի համատեքստում (3):*

Բանն այն է, որ այս նյութերը իրենց զուտային վառ երանգներով, շարժունակությամբ սովորողի մոտ առաջացնում են հաճույքով սովորելու ցանկություն, բայց դա չի նշանակում, որ նրանց ուսումնառության գործընթացը վերածվում է խաղի կամ զվարճանքի:

"Մեր ողջ հասարակությունը նկարագրվում է հաճույքի նշանակությունը: Մենք դրա մասին մտածում ենք որպես զվարճանք և խաղեր, փախուստ իրականությունից, հազվադեպ համարելով արժանի ավարտ: Զարմանալիորեն մենք կապ չենք տեսնում կենսականության՝ լավ զգալու արդյունքում առաջացող էներգիայի և հաճույքը զգալու պատրաստակամության միջև" (4):

Իր որոշակի թերություններով հանդերձ այս նյութերի ներմուծումն ուսումնական գործընթաց չի կարող չհամարվել ձեռքբերում, և չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ առանց նոր քայլեր ձեռնարկելու՝ մենք չենք կարող հաջողությունների հասնել մեր ծրագրերի իրականացման հարցում: Ժամանակը թելադրում է իր պահանջները, իսկ մենք պետք է փորձենք գնալ նրա հետևից՝ առավելագույնս արդյունավետ կերպով օգտագործելով այն հնարավորությունները, որ տալիս է մեզ այս առաջընթացը: Մարդկությունը երբեք չի կարողացել հակառակվել ժամանակի թելադրանքին,

ուստի ճիշտ կլինի ոչ թե պայքարել դրա դեմ, այլ փորձել այն առավելագույնս արդյունավետ կերպով ծառայեցնել մեր շահերին: Այսօր մեր պարտքն է երեխաներին կրթելը: Մենք կարող ենք այն դարձնել հետաքրքիր՝ մեզ խանգարող հանգամանքները հօգուտ մեր նպատակի կիրառելով: Մենք բողոքում ենք, որ երեխաներն ավելի շատ հեռուստացույցի ու համակարգչի առջև են նստում, քան գիրք կարդում: Հետևաբար պետք է գիրքը տեղափոխել համակարգչի մեջ, որ այն չկորչի ու լինի հրապուրիչ:

Էլեկտրոնային ուսուցումն այն հեռանկարն է, որը կարող է մեզ հասցնել նոր սերնդի ուսուցման գործընթացի լավ կազմակերպմանը:

---

1. The second language learning should be more like first language learning – lots of oral interaction, spontaneous use of the language, no translation between first and second languages, and little or no analysis of grammatical rules.

Francois Gouin "The Art of Learning and Studying Foreign Languages" 1880

2. Think of yourself not as much as a teacher who must constantly "deliver" information to your students, but more as a facilitator of learning whose job it is to set the stage for learning, to start the wheels turning inside the heads of your students, to turn them on to their own abilities, and to help channel those abilities in fruitful directions. Intrinsic motivation

Deci, Edward L. 1975. Intrinsic Motivation. Plenum Press

3. Certain cognitive psychologists canter on the importance of people deciding for themselves what to think or feel or do. We define ourselves by making our own decisions, rather that by simply reacting to others. Motivation is highest when one can make one's own choices, whether they be in short-term or long-term contexts. (Hunt, 1965, "The Role of Motivation")

3. "Our whole society diminishes the value of pleasure. We think of it as fun and games, an escape from reality-rarely a worthwhile end in itself. Amazingly, we don't make the connection between vitality-the energy that comes from feeling good-and the willingness to take pleasure experience".

Stella Resnick therapist "The Pleasure Zone" (Conari Press, 1997)